# Արարելու անսպառ կիրք



Երկակի զգացում ես ապրում այս պահին: Նախ՝ չես ուզում հավատալ, որ այդ վայելչակազմ, միշտ երիտասարդ ու գեղեցիկ տղամարդը բոլորում է իր հիսուն տարին. ե՞րբ, ինչպե՞ս... Եվ հետո՝ «Հարյուր տարի» է մեր մտավորականների ու արվեստագետների շրջանում, հանրապետական ու միջազգային ցուցահանդեսներում, Հայաստանում եւ արտասահմանում շարունակաբար հոլովվում է Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր, մեծ ճանաչում գտած արվեստագետ Արամ Իսաբեկյանի անունը, եւ զարմանում ես՝ ո՞ր է դառնում հիսուն տարեկան:

Երբ մտորում ես գեղանկարչության ասպարեզում Արամ Իսաբեկյանի ներդրման ու վաստակի մասին, ապա թվում է, թե նա առաջին հերթին, ցույց տվեց, որ պրոֆեսիոնալ բարձր մակարդակ ու լայն ինտելեկտ ունենալու դեպքում արվեստագետ–նկարիչը կարող է ժամանակակից ցանկացած ուղղության մեջ խոսք ասել: Դրա վկայությունը նրա մի շարք կոմպոզիցիաներն են ու թեմատիկ մոտիվները. «Պոետը», «Զբոսանք», «Կախարդուհի», «Մերկ կին», «Մասուրի ճյուղը», «Վհուկներ» եւ այլն: Այդուամենայնիվ, հայ գեղանկարչության դասականների ընտանիքում ծնված ու մեծացած զավակը հոգու խորքում փայփայել է ազգային իրատեսական արվեստի լավագույն ավանդույթների գաղափարը: Չափանիշների այս խառնակ շրջանում այն պետք է համատեղվեր արդիական մոտեցումների ու նախասիրությունների հետ՝ նոր որակ բերելով հայ կերպարվեստին:

Այս առումով առավել տպավորիչը Իսաբեկյանի ստեղծագործություններում դիմանկարներն են: Ասում են, որ նույնիսկ վերածննդի շրջանում յուրաքանչյուր նշանավոր վարպետ պարտադիր է համարել իր ուժերը փորձել դիմանկարի ժանրում: Չգրված օրենքով, հենց այստեղ էր կատարվում նկարչի անհատականության ինքնահաստատումը: Այսօր Արամի ինքնահաստատումը վավերացված իրողություն է. այն էլ՝ ինչպես: Վստահ կարող ենք ասել, որ պատվարժան հոբելյարի վրձնած «Հոր դիմանկարը», «Փարավոն Միրզոյանը», «Վերածնունդը» մեր կերպարվեստի նվաճումների շարքում են եւ իրենց ուրույն տեղն ունեն հայկական դիմանկարչության ոսկե ֆոնդում: Եթե ստեղծագործական կրքոտ եռանդով կատարված հոր եւ Փարավոն Միրզոյանի դիմանկարներում նկարիչը, զերծ մնալով ավելորդ էֆեկտներից, հասել է կերպարի արտաքին եւ ներքին բովանդակության հա-



մակողմանի ընդգրկման ու հոգեբանական բացահայտման (սովորական պահի մեջ ինչպես է արտահայտել գեղանկարչության մեր նահապետի աչքերի թուլացած ուժը), ապա «Վերածննդում» (ասես անձեռակերտ լինի), «Աննայի դիմանկարում», «Վառվառայում» ամբողջովին տիրապետում է քնարական շունչը: Կատարման մաքուր արտահայտչաձեւերում, հակիրճության ու պարզության մեջ զգացվում է Հովնաթանյանական լռիկ մի ջերմություն, միայն թե՝ լուսավոր գամմայով, կապույտի թափանցիկ արտացոլումներով ու ներքին ճառագումով: Միջնադարյան արվեստում մեր նախնիների այնքան սիրած կապույտը արտահայտել է հարատեւության իմաստ: Եվ միթե՞ կյանքի հարատեւության ու գեղեցկության խորհրդանիշները չեն արտահայտում բյուրեղի պես մաքուր հոգու եւ պատանեկան խառնվածքով լեցուն այդ աղջնակները: Կատարման ինչպիսի վարպետություն, ձեւերի ու գույների ինչպիսի զգացում: Մեղմ, փոքր ինչ ցրված ճակատային լույսը օգնել է նկարչին ներդաշնելու տոնային նուրբ հակադրությունները:

Արամ Իսաբեկյանը ապացուցում է, որ իսկական արվեստագետի հնարավորությունները անսպառ են, որ արվեստը կանոնների քարացած համակարգ չէ: Յուրաքանչյուր թեմա, յուրաքանչյուր կերպար թելադրում է մեկնաբանման իր ուրույն ձեւը, գեղեցիկի ընկալման հարաբերականությունը:

Հիսուն տարին արվեստի մեջ և՛ շատ է, և՛ քիչ: Արամ Իսաբեկյանի հիսուն տարին վարձահատուցված է: Սակայն տաղանդը պարտավորեցնում է: Իր ողջ զբաղվածության հետ՝ խոշոր բուհի ղեկավարելը, նիստերը, խորհրդակցությունները եւ վերջապես՝ ընկերական լայն շրջապատը: Նա շարունակ արարել է, որովհետեւ Աստված նրա մեջ ներարկել է նկարելու անսպառ կիրքը:

*Հրավարդ ՀԱԿՈԲՅԱՆ*
*Արվեստաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*